ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐ. ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻՑ ՍԻՐԻԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽ

Անի Ոսկանեան
ani.h.voskanyan@gmail.com

Առաջին Համաշխարհային Պատերազմի սկզբից եւեթ հայ բժիշկները զօրակոչւում ու որպէս զինուորական բժիշկներ ծառայում են օսմանեան բանակում: Պատերազմի դժուարին օրերին հայ զինուորական բժիշկները իրենց մեծ ներդրումն են ունենում գրեթէ բոլոր ճակատներում: Հիմնականում արեւմտեան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում կրթութիւն ստացած հայ բժիշկներն անհրաժեշտութիւն էին, թերեւս բոլոր զօրամասերում, քանզի բարձրակարգ բժիշկ լինելուց բացի նրանք յաճախ ստանձնում էին նաեւ թարգմանչի պարտականութիւն:

Թէեւ հայ զինուորական բժիշկները բարձր պատասխանատուութեամբ էին ծառայում եւ կատարում իրենց պարտականութիւնները, այնուհանդերձ նրանց ձերբակալելու, ապա սպանելու հրամանները չեն ուշանում: Պատերազմի տարիներին, յատկապէս 1916ից սկսած, օսմանեան բանակում արդէն բժիշկների մեծ պահանջ կար, սակայն հայ զինուորական բժիշկների ձերբակալութիւնները եւ սպանութիւնները շարունակւում էին:

1839 Նոյեմբերի 9ին, Գիւլհանէի արքայական պալատում Ռեշիդ փաշան հռչակում է *հաթթի շերիֆը*: Այն երկիրն արդիականացնելու առաջին փորձերից էր: *Թանզիմաթի՝* երկրի ոչ-իսլամներին ընձեռած հնարաւորութիւններից, թերեւս յատկանշականը նրանց մուտքն էր տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ, իսկ 1841ից սկսած նաեւ նորաբաց Կայսերական Բժշկական Վարժարան:

Որոշ ժամանակ անց, արդէն 1880ականներին, միայն Կ. Պոլսում կար 300ից աւել հայ բժիշկ[1]:

Ռազմաբժշկական կրթութիւն ստացած հայ զինուորական բժիշկներից շատերը, տարիների վաստակի արդիւնքում մասնակցում էին Կարմիր Մահիկի հիմնադրման աշխատանքներին, ընտրւում էին Կայսերական Բժշկական Ընկերութեան անդամ, երբեմն՝ նախագահ[2]:

Դեռեւս ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Կայսրութեանը ծառայելու առթիւ բժիշկներ Տիգրան Փեշտիմալճեանին (1837-1894), Ստեփան Ասլանեանին (1822-1901), Միքայէլ Խորասանճեանին (1835-1903), Իսկենդէր փաշային (Կարապետ Իսկենդէրեան) (1835-1910), Եաւէր փաշային (Անտոն Թընկըրեան) (1812-1908), Գաբրիէլ Սեւեանին (1822-1900), Անտոն Նաֆիլեանին (1831-1912), Անդրանիկ Կոճիկեանին (1819-1894), Վահան Մանուէլեանին (1847-1902) եւ Տիգրան Բաբայեանին (1861-1934)[3] շնորհւում է փաշայի տիտղոս:

Մի խումբ հայ բժիշկների շնորհւում է գնդապետի (*միրալայ*) զինուորական աստիճան, ինչպէս՝ Գաբրիէլ [Գասպար] բէյ Սինապեան (1814-

1872), Յակոբ բէյ Տաւուտեան (1813-1878), Աղեքսանդր բէյ Արապեան (?-?), Գաբրիէլ բէյ Թաշճեան, Կոմիտաս բէյ Մինասեան (1837-1903), Ջիւան բէյ Անանեան (1848-?), Յովհաննէս բէյ Գըրըգճեան, Աբրահամ բէյ Սագայեան, Տիգրան բէյ Աճեմեան (1852-1913), Յակոբ բէյ Խանտանեան (1834-1899), Մինաս բէյ Աւետիսեան (1849-?), Յովհաննէս բէյ Թապիպեան (1845-1894), Յակոբ բէյ Յովհաննիսեան (1826-1859), Աբրահամ բէյ Ներսէսեան, Մանուկ բէյ Աղասեան (?-1895), Յակոբ բէյ Պեկեան (?-1928)[4]:

1914ի աշնան առաջին ամիսներին, երբ Օսմանեան Կայսրութիւնը պատերազմի դեռ չէր մտել, հայ բժիշկները իրենց փորձը եւ գիտելիքները փոխանցելու համար մի շարք գիտաժողովներ էին կազմակերպում: Միաժամանակ, Հայկական Բժշկական Միութեան նախաձեռնութեամբ, Կ. Պոլսի Եսայեան դպրոցում հիւանդապահութեան դասընթաց էր անցկացւում[5]:

Պատերազմի առաջին օրերից օսմանեան բանակ զօրակոչուած հայ բժիշկների կենսագրական տուեալների ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն է տալիս ոչ միայն նրանց ծառայութեան ընթացքի մասին տեղեկանալու, այլեւ առաւել համակողմանի ներկայացնելու տարբեր զօրամասերում տիրող իրավիճակը: Միեւնոյն ժամանակ բժիշկներից շատերի կենսագրութիւններն ու մահուան փաստերը կարծես բնաջնջման այն հրամանագրերն են, որոնք տարիների ընթացքում խնամքով կոծկել են Հայոց Ցեղասպանութեան կազմակերպիչներն ու իրագործողները:

Թէեւ ստորեւ ներկայացուած զինուորական բժիշկների կրճատ կենսագրութիւններն ամբողջովին չեն ներկայացնում կայսրութեան վարած քաղաքականութիւնը, այնուամենայնիւ ընդհանրական պատկերացում կազմելու հնարաւորութիւն տալիս են:

Երուանդ Սարաֆեանը աւարտել է Կ. Պոլսի Կայսերական Բժշկական Վարժարանը: Զօրակոչուել է բանակ: Իր պարտականութիւնները կատարելիս՝ Լիբանանում վիրաւորուել է ոտքից: Սարաֆեանը, ամիսներ շարունակ տառապել է Դամասկոսի Զինուորական Հիւանդանոցում, 1917ի ամռանը մահացել է՝ թուրք բժիշկների կողմից անտեսուած լինելու եւ բուժում չստանալու պատճառով[6]:

Սուրէն Ազիրեանը սովորել է Տարսոնի Ամերիկեան Քոլէջում, ապա՝ Բէյրութի Ամերիկեան Համալսարանի Բժշկական Բաժնում: 1914ին զօրակոչուել է Օսմանեան բանակ՝ ծառայելով որպէս բժշկի օգնական: 1917ին, Դամասկոսում վարակուել է բծաւոր տիֆով եւ մահացել[7]:

Նազարէթ Աքսարայլեանը աւարտել է Կ. Պոլսի Զինուորական Բժշկական Վարժարանը՝ հարիւրապետի աստիճանով: 1888ից շուրջ 12 տարի ծառայել է Եմէնում, 1900ին՝ Սիրիայում, 1904ից՝ Պոլսում: Երկրորդ Սահմանադրութեան հռչակումից յետոյ, զինուորական հիւանդանոցի գլխաւոր բժիշկ է նշանակուել: 1912ին միրալայի (գնդապետ) զինուորական կոչումով անցել է թոշակի. Բալկանեան Պատերազմի ժամանակ կառավարութեան կողմից ետ է կանչուել եւ ծառայել է Գիւմուշսոյու հիւանդանոցում[8]:

Յարութիւն Խոռխոռունին նախնական կրթութիւնը ստացել է Վանի Բադրիկեան Դպրոցում, այնուհետեւ աւարտել է Հայդարփաշայի Բժշկական Վարժարանը: Առաջին Աշխարհամարտի տարիներին ծառայել է սիրիական ճակատում: Նրան յաջողուել է վերապրել: Նա մասնակցել է նաեւ Երկրորդ Աշխարհամարտին՝ ծառայելով Էլազիգում[9]:

Հայ բժիշկները պատերազմի ընթացքում ենթարկուել են նաեւ բռնի կրօնափոխութեան: Պատմաբան Հայկազն Ղազարեանը ներկայացնում է Կ. Պոլսի գերմանական կայսերական դեսպանատուն ուղարկուած հայ զինուորական բժիշկների ջարդի եւ բռնի կրօնափոխութեան վերաբերեալ միքանի հեռագրեր, որոնք ոչ միայն ներկայացնում են այդ օրերի իրավիճակը, այլեւ մատնանշում են իշխանութիւնների կողմից կազմակերպուած եւ հետեւողականօրէն իրականացուող ոչնչացումը: Դրանցից յատկանշական է 1916ին Գերմանիայի փոխհիւպատոս Քարլ Վերթի հեռագրերը՝ Կ. Պոլսի դեսպանատան, այնուհետեւ հեռագրերի պատճէնները ուղարկուել են Գերմանիայի Կայսրութեան կանցլէր Բեթման Հոլուէգին. «*...հայ զինուորական բժիշկները, ամէն ասպիճանի, սպառնալիքի տակ իսլամացուցին: Ամէնքը սպիպուեցան կրօնափոխ դառնալ*»[10]: Ուշագրաւ է նաեւ Ղազրեանի նկատառումը, որում ասւում է. «*Քանի մը հայ բժիշկներ անուանափոխ ըլլալով կրցած էին ողջ մնալ, բայց թուրքերը 1.000է աւելի հայ բժիշկներ եւ դեղագործներ սպանած են*»[11]:

Անցնելով պատերազմի արհաւիրքներով, ականատես լինելով սեփական ժողովրդի ոչնչացմանը, նրանցից քչերին է յաջողուել կենդանի մնալ եւ զօրացրուել:

Մուդրոսի Զինադադարից յետոյ վերապրած հայ բժիշկներից շատերը հաստատւում են Սիրիա: Այդ օրերին Հալէպում գործում էին շուրջ երկուտասնեակ բժիշկներ, որոնց միացան 60 հայ բժիշկներ: Հայ բժիշկների, դեղագործների ու ատամնաբուժների քանակական գերազանցութիւնը տեւում է մօտ 25 տարի՝ մինչեւ Բ. Համաշխարհայինի աւարտը[12]:

1918ին զօրացրուած սպաներից մէկն էր Օսմանեան Կայսերական բանակի սպայ, բժիշկ Աւետիս Ճեպէճեանը, ով 1914ին զօրակոչուելով բանակ նշանակւում է ծառայութեան Կ.Պոլսի մօտակայքում, 1915-16ին մասնակցում Դարդանէլի ճակատամարտին, այնուհետեւ ուղարկւում է արեւելեան ճակատ, որպէս բժիշկ-հարիւրապետ անցնում է Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր քաղաքներով՝ տեսնելով ու ապրելով բնաջնջուող իր ժողովրդի ողջ ցաւը: Նա ծառայութեանը զուգահեռ հայատառ թուրքերենով գրառումներ էր կատարում իր օրագրում, որը բացի անձնական բնոյթի տեղեկութիւններից, ականատես զինուորի տեսանկիւնից համակողմանի ներկայացնում է պատմական իրադարձութիւններն ու տալիս բազմաթիւ անյայտ փաստեր, վիճակագրական տուեալներ, բանակում տիրող կարգ ու կանոնի մասին գաղափար[13]:

1915ի բռնագաղթի ընթացքում կար օրէնք, որով խնայւում էին զինուորական բժիշկների, նաեւ զինուորականների ընտանիքները[14], ուստի Ճեպէճեանի ընտանիքը պատերազմի ողջ ընթացքում Հալէպում մնալու թոյլտուութիւն ունւր: Ճեպէճեանի կինը՝ Տիկ. Եւնիկէն, կարողանում է իր տանը շատ հայերի գաղտնի օթեւան տալ, եղել են դէպքեր, երբ կինը ապաստան է տուել երկու տասնեակից աւել մարդու[15]:

Եւնիկէ Ճեպէճեանը յաճախ այցելում էր նաեւ տարագիրների կայանները՝ Քարլըկ, Աղ-Եոլ, Սեպիլ, Բաղդադի Կայարան՝ բաժանելով հագուստ, սնունդ եւ այլ անհրաժեշտ պարագաներ: Ոստիկանութեան ուշադրութիւնից խուսափելու համար, կինը գրեթէ միշտ ծպտւում էր՝ կրելով մուսուլման կնոջ հանդերձանք[16]:

Զինադադարից յետոյ Ճեպէճեանը վերադառնում է Հալէպ եւ բժիշկ Ֆիլիպ Յովնանեանի հետ հիմնադրում իրենց անունը կրող Ճեպէճեան-Յովնանեան հիւանդանոցը, բժիշկների համատեղ գործունէութիւնը տեւում է մինչեւ 1936՝ Յովնանեանի մահը, այնուհետեւ հայր եւ որդի՝ Աւետիս եւ Ռոբերտ Ճեպէճեանները շարունակում են աշխատանքները: Հիւանդանոցը փակւում է 1952ին, Աւետիս Ճեպէճեանի մահով[17]:

Հիւանդանոցը, լինելով համապատասխան ժամանակի չափանիշներին, ծառայում էր ոչ միայն Ցեղասպանութիւնը վերապրած հայ ժողովրդի բեկորներին, այլեւ մեծ ներդրում է ունենում Սիրիայում բժշկութեան զարգացման եւ առաջընթացի գործում:

Սակայն մինչ այդ՝ ԺԹ. դարի 80ականներից, Հալէպում արդէն հաստատուել եւ գործում էր հայ անուանի բժիշկներից մէկը՝ Ասատուր Արամ Ալթունեանը (1854-1950), ով, թերեւս, հայ բժշկութեան պատմութեան բացառիկ դէմքերից է եւ աւելի քան կէս դար Մերձաւոր Արեւելքում բժշկութեան առաջընթացի ջահակիրներից:

1911ին Հալէպում Ալթունեանը հիմնադրում է հիւանդանոց, որն իր տեսակով աննախադէպ էր Մերձաւոր Արեւելքում (գործել է մինչեւ 1962ը): Աւելի քան կէս դար Ալթունեանի հիւանդանոցի վիրահատական սենեակը անգերազանցելի էր, իր մշտապէս նորացուող բուժական սարքերով, իսկ մանրադիտակային եւ գիտաշխատանոցային զննութիւնների բաժանմունքները շուրջ 35 տարի Սիրիայում առաջատար դիրքում էին:

Դեռեւս 1914ին Հալէպի Գերմանական Վարժարանի ուսուցիչ Դոկտոր Պրոֆեսոր Էտուարտ Կրեթըրը իր «Ճամբու Նօթեր Հալէպէն» յօդուածում լաւագոյնս ներկայացրել է Ալթունեան հիւանդանոցը. «*Այս պահուս երբ ամբողջ աշխարհը կը խօսի Թուրքիոյ մէջ կատարուելիք բարենորոգումներու եւ յառաջդիմութեանց մասին, կարելի չէ չհիանալ այնպիսի հաստատութեան մը վրայ, որ մեծ ազդակը եղած է քաղաքկրթութեան ու յառաջդիմութեան ամէն անոնց, որոնք առիթը ունեցած են շփման մէջ գտնուելու սոյն հաստատութեան հետ, որը փառքն ու պարծանքը կրնայ ըլլալ չէ թէ միայն իր հիմնադրին, այլ նաեւ իր այն*

պատկանած ազգին, որը բազմիցս ապացոյցներ տուած է արդէն իր ընդունակութիւնը յատկանշող եւրոպական քաղաքկրթութեան մէջ»[18]:

Ապա աւարտելով, Կրեթերը յաւելում է. «*Հոն միայն հալէպցիներ եւ ընդհանրապէս սիւրացիներ չէ որ կը նշմարուին. «Տօքթօր Ամերիքէն»ի համբաւը ինչպէս որ կը կոչեն զինք Տոքթ. Ալթունեանը՝ տարածուած է ոչ թէ միայն Սիւրիոյ, այլ ամբողջ Արաբիոյ, Հայաստանի, Քիւրտիստանի եւ Պարսկաստանի խորերը, ուրկէ գունդագունդ հարիւրաւոր հիւանդներ կը դիմեն Հալէպ, վիրաբուժական գործողութիւններու ենթարկուելու համար, եւ ուր ամէնադժուարին գործողութիւններն իսկ կը կատարուին եւրոպական նոյնօրինակ հաստատութիւններուն հաւասար յաջողութեամբ մը*»[19]:

Ալթունեանը 1896ին, ռենտգէնեան ճառագայթների յայտնագործումից մէկ տարի անց, Լոնդոնից Հալէպ է բերում ռենտգէնախտորոշման առաջին սարքը: Այնուհետեւ նորագոյն սարքաւորումներ ներկրելու գործընթացը դառնում է շարունակական: Իսկ արդէն 1937ին գերմանական ախտաճանաչման նոր բուժտեխնիկայի համալրմամբ՝ Ալթունեան հիւանդանոցը դառնում է ռենտգէնաբուժական կատարելագործուած ախտաճանաչման ու բուժման սարքաւորումներով առաջին կենտրոնը Սիրիայում[20]:

Առաջին Աշխարհամարտի սկզբին Ալթունեանը դիմում է օսմանեան ռազմական իշխանութիւններին որեւէ ճակատում ծառայութեան անցնելու համար, սակայն նրան պատասխանում են, որ Հալէպում նրա ծաւալած գործունէութիւնը ունի ռազմավարական նշանակութիւն կայսրութեան համար, ուստի նպատակայարմար է, որ Ալթունեանը մնայ այնտեղ:

Դարդանէլի ճակատամատի ընթացքում, Ալթունեանը Ջեմալ փաշայից հեռագիր է ստանում, որում՝ բանակի կարիքներից ելնելով, ռենտգէնի սարքաւորումը Կ.Պոլիս տեղափոխելու անհրաժեշտութեան մասին էր ասում: Հեռագիրը հրաման էր, ուստի Ալթունեանն անմիջապէս կատարում է այն: Աւելի ուշ, Ջեմալ փաշան անձամբ եւս դիմում է Ալթունանին եւ բուժզննում ու բուժում ստանում նրա հիւանդանցում[21]:

Պատերազմի տարիներին, երբ բժիշկների մեծ մասը զօրակոչուած էր բանակ, տիֆը եւ այլ համաճարակային հիւանդութիւնները մեծ չափերի էին հասնում, Ալթունեանը ժամանակի արդիական միջոցներով կարողանում է պայքարել այս հիւանդութիւնների դէմ՝ մեծ գործ կատարելով Հալէպի Նահանգի ողջ բնակչութեան համար:

Հայոց Ցեղասպանութեան տարիներին Սիրիայում ապաստանած հայ տարագիրներին փրկելու, օգնելու, հովանաւորելու հարցում եւս Ալթունեանի ներդրումը մեծ էր: Ալթունեանը եւ Մազլումեան եղբայրները, շնորհիւ իրենց դիրքի, հնարաւորութիւն ունէին կարգաւորելու հայ տարագիրներին առնչուող տարբեր խնդիրներ, երբեմն անմիջական միջամտութեամբ նաեւ կարողանում էին կեանքեր փրկել:

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին իր դուստր Նորայի օգնութեամբ, Ալթունեանը ձեռնամուխ է լինում նաեւ հայ որբեր

փրկելու գործին: Մշտապէս Ալթունեանի ուշադրութեան կենտրոնում էր գտնւում Հալէպի Հայկական Որբանոցը, որը բացուել է 1915 Յուլիսի 31ին: Որբանոցը գլխաւորում էր Վեր. Ահարոն Շիրաճեանը, ում գործն ու վաստակը, անշուշտ, անքննելի է, սակայն շատերի կողմից հաստատութիւնը ընկալւում էր որպէս «Ալթունեան որբանոց»[22]:

Օգտագործելով հալէպաբնակ օտարազգիների հետ անձնական կապերը՝ Ալթունեանը հնարաւորութիւն ունէր միջազգային Կարմիր Խաչի միջոցով, արտասահմանում գտնուող հայ եւ օտար կազմակերպութիւններից նպաստներ ստանալ յօգուտ որբանոցի[23]:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ Խապայեանը, պատերազմի աւարտին տեղափոխւում է Հալէպ եւ մարմիններ ստեղծում «Ազգային Միութիւն» անուան տակ: Հալէպում Ազգային Միութիւնը եւս նախագահում էր բժշկապետ Ալթունեանը[24]:

Պատերազմի աւարտին Հայ Ազգային Միութիւնը եւ Ալթունեանը գործուն մասնակցութիւն են ունենում հայ գաղթականներին տեղաւորելու գործում: Ալթունեանը օգնում ու սատարում է նաեւ աւելի ուշ քեմալական Թուրքիայից բռնագաղթած իր հայրենակիցներին:

1923ին մասնակցում է Հայ Կարմիր Խաչի հիմնադրման աշխատանքներին՝ յետագայում դառնալով նրա գործուն անդամը:

Ալթունեանի ջանքերով, 1927ին Հալէպում հիմանդրւում է բուժքոյրերի դպրոցը, որն իր աշխատանքները շարունակում է մինչեւ 1958՝ կրթելով աւելի քան 100 բուժքոյր: Տարբեր տարիների բուժքոյրերի դպրոցի բազմաթիւ շրջանաւարտներ որպէս պահանջուած մասնագէտներ աշխատանքի են անցնում Սիրիայում, Լիբանանում, Յորդանանում, Քուէյթում, Քաթարում, Անգլիայում, Մ. Նահանգներում եւ Հայաստանում[25]:

1937ին Հալէպի Բժշկական Միութեան վարչութեան կողմից Ալթունեանը Հալէպի Բժիշկների Միութեան պատուաւոր նախագահ է ընտրւում՝ մեծարուելով «Հալէպի բժիշկների հայր» պատուանուամբ: 1946ին Սիրիայի անկախ հռչակուելուց յետոյ, ընտրւում է Հալէպի վերակազմաւորուած Բժշկական Միութեան Պատուաւոր նախագահ եւ այն ղեկավարում մինչեւ իր մահը՝ 1950[26]:

Երկարամեայ բժշկական գործունէութեան համար Ալթունեանը արժանացել է պարգեւների ու շքանշանների, ինչպէս՝ իտալական կառավարութեան «Իտալական Գահի Ասպետ» տիտղոսը ու մեդալը, Սիրիական կառավարութեան՝ «Սուրիական Արժանեաց» Բ. կարգի (1931) եւ «Սուրիական Արժանեաց» Ա. կարգի (1940) պատուանշանները: 1939ի Նիւ Եորքի համագումարի ընթացքում Ալթունեանը արժանանում է Վիրաբուժների Միջազգային Քոլէջի ոսկէ մեդալի, իսկ 1950ին՝ (յետմահու) Սիրիայի ժողովրդին մատուցած իր երկարամեայ ծառայութիւնների համար Սիրիայի կառավարութեան կողմից պարգեւատրւում «Սուրիական Արժանեաց» արտադաս գերագոյն մեդալով[27]:

Դարեր շարունակ Օսմանեան Կայսրութիւնում, այնուհետեւ Սիրիայում հայ բժիշկների գործունէութիւնն ու մատուցած ծառայութիւններն ոչ միայն նպաստեցին Մերձաւոր Արեւելքում գիտական, արդի բժշկութեան զարգացմանը, այլեւ փրկեցին բազմաթիւ կեանքեր, ինչպէս պատերազմի տարիներին, այնպէս էլ խախաղ ժամանակներում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հրաչեայ Աճառեան, *Հայոց Դերը Օսմանեան Կայսրութեան Մէջ*, Երեւան, «Զանգակ-97», 1999, էջ 19:

[2] Օսմանեան Բժշկական Ընկերութեան հիմնադիրներից են եղել Յակոբ Տաւուտեանը, Սերվիչէնը եւ Գասպար Սինապեանը, յետագայում Դոկտ.ներ Սերվիչէնը, Սինապեանը, Փեշտիմալճեանը, Խորասանճեանը եղան նոյն ընկերութեան նախագահ, իսկ. Թորգոմեանը՝ փոխնախագահ (Յ. Ճ. Սիրունի, *Պոլիս եւ Իր Դերը, Չորրորդ Հտր.*, Անթիլիաս-Լիբանան, Տպ. ՄՏԿՀԿ, 1988, էջ 259): Գասպար բէյ Սինապեանը 1863 Օգոստոսի 21ին քուէարկութեամբ ընտրուել է Կայսերական Բժշկական Ընկերութեան նախագահ (Ա. Ն. Մեզպուրեան, *Հայ եւ Ծագումով Հայ Բժիշկներ*, Իսթանպուլ, 1950, էջ 90):

[3] Սիրունի, էջ 259. նաեւ՝ Մեզպուրեան. նաեւ՝ Ա. Աստոյեան, *Հայերն Օսմանեան Բանակում (XIV դարից մինչեւ 1918 թ.)*, Երեւան, «Նայիրի», 2010:

[4] Նոյն:

[5] N. O. İzrail, *24 Nisan 1915 İstanbul, Çankiri, Ayaş, Ankara* (24 Ապրիլի 1915 թ., Ստամբուլ, Չանքըրը, Այաշ, Անկարա), İstanbul, İletişim Yayinlari, 2013, էջ 293:

[6] Տոքթ. Գասպար Մ. Կարոյեան, *Մեծ Եղեռնի Նահատակ Հայ Բժիշկները (Անոնց Պատգամները)*, Պոսթոն, 1957, էջ 111-112:

[7] Մ. Քէլէշեան, *Սիս-Մատեան*, Պէյրութ, Տպ. «Հայ Ճեմարանի», 1949, էջ 336-337:

[8] Arsen Yarman, *Osmanli Sağlik Hizmetlerinde Ermaniler ve Surp Pirgiç Ermeni Hastanesi Tarihi* (Հայերն օսմանեան առողջապահական ոլորտում եւ Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցի պատմութիւնը), İstanbul, Surp Pirgiç Ermeni Hastanesi vakf i, 2002, էջ 775:

[9] Նոյն, էջ 784:

[10] Հայկազն Գ. Ղազարեան, *Յեղասպան Թուրքը*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1968, էջ 101:

[11] Նոյն:

[12] Ռ. Ճեպէճեան, *Ինքնակենսագրութիւն, Յուշեր եւ Գործունէութիւն*, Հալէպ, Հրատ՝. Վիոլէտ Ճեպէճեան Գրադարան, 1999, էջ 125:

[13] Ա. Ճեպէճեան, *Օսմանեան Կայսերական Բանակի Սպայ՝ Բժիշկ Աւետիս Ճեպէճեանին Օրագիրը (1914-1918)*, Պէյրութ, Հրատ՝. Վիոլէթ Ճեպէճեան Գրադարան, 1986:

[14] Օրէնքը գործել է խախտումներով, ինչպէս՝ զինուորական բժիշկների, այնպէս էլ զինուորականների ընտանիքները աւելի յաճախ ենթարկուել էն բռնագաղթի:

[15] Ճեպէճեան, *Ինքնակենսագրութիւն...*, էջ 31:

[16] Նոյն:

[17] Նոյն, էջ 138-140:

[18] Վ. Ղազարեան, *Տարեցոյց Բժշկական եւ Առողջապահական, Ա. Տարի*, Կ. Պոլիս, Տպ. Արաքս, 1914, էջ 289: 1914ին Վահան Ղազարեանը եւս զօրակոչուել է եւ որպէս զինուորական բժիշկ ծառայել 153րդ զօրագնդում: Ստացել է հարիւրապետի աստիճան եւ նշանակուել երրորդ գումարտակի բժիշկ: Սպանուել է իր գնդի հրամանատարների հրահանգով (Կարոյեան, էջ 101):

[19] Նոյն:

[20] Ռ. Ճեպէճեան, *Հալէպի Մեծանուն Բժշկապետ Ա. Ա. Ալթունեան եւ Իր Գործը*, Հալէպ, Տպ. «Հալէպ» Ներսէս Նալպանտեան, 1969, էջ 71-72:

[21] Նոյն, էջ 73-74:

[22] Նոյն, էջ 114:

[23] Նոյն:

[24] Ճեպէճեան, *Ինքնակենսագրութիւն...*, էջ 85:

[25] Ճեպէճեան, *Հալէպի Մեծանուն Բժշկապետ Ա. Ա. Ալթունեան...*, էջ 101-106:

[26] Նոյն, էջ 28:

[27] Նոյն, էջ 20-30:

Ottoman Army Armenian Physicians in Post-Genocide Aleppo

(Summary)

Ani Voskanian
ani.h.voskanyan@gmail.com

The paper focuses on the immense contribution of Armenian doctors in the development of the field of medicine in Syria.

Right after Ottoman Turkey became embroiled in WWI, Ottoman Armenian physicians were conscripted into the Ottoman army. They served not only as doctors but as translators too, since most of them were graduates of European universities. Very few of these doctors survived the war and the Genocide.

After the Mudros Armistice, several surviving doctors settled in Syria and joined humanitarian efforts. Some 60 Armenian doctors functioned in Aleppo from the early 1920s up to the end of WWII.

Among the demobilized doctors, sergeant Avedis Djebedjian acquired prominence in Aleppo, where he and Dr. Philip Hovnanian established a hospital and contributed to the development of Syrian medicine.

Another prominent figure in the field was Dr. Asadur Altounian, who was a champion of the development of medical sciences in the Middle East for over half a century. After establishing himself in Aleppo in the 1890s, Dr. Altounian revolutionised the field by incorporating medical equipment into his practice. He was the first in Syria to order and make use of an X-ray machine from London.

With his daughter, Dr. Altounian made great efforts to save orphans and refugees. He was ordered to relocate to Istanbul to give medical support to the Ottoman army. In fact, Djemal Pasha was X-rayed and given medical treatment by Dr. Altounian.

In 1927 Altounian established the first nursing school in Aleppo, which had its first graduates in 1931.